

ՆՂԻԱ ՄՈՒՇՆԱԳԱՆԸ ԱՌԱՎԱԳԻՐ

Հայտնի է, որ Վարդան Այգեկցուց հետո, XIII—XVII դդ., հայ առակագրությունը առանձնակի զարգացում չի ապրել: Ծիշտ է, այդ ժամանակահատվածում Մխիթար Գոշի և Վարդան Այգեկցու առակները հաճախ են ընդօրինակվել ձեռագիր ժողովածուներում, անգամ «Աղվեսագիրք» կոչվող առակների ժողովածուն XVII դարի երկրորդ կեսին երեք հրատարակություն է ունեցել (1668, 1685, 1698 թթ.)¹, բայց առակի ժանրով գրող նոր հայ հեղինակներ երևան չեն եկել, չեն եղել նաև նոր թարգմանություններ: Այս առումով ուշ միջնադարի հայ գրականության պատմության համար հետաքրքրություն են ներկայացնում XVIII դարի առաջին կեսի վաճառական-բանահավաք Նդիա Մուշեղյանի (Կարենցի², 1689—1750³) դիվանում³ պահվող 31 և «Հուշամատյանում»⁴ դրի առկա շորս առակները:

Աղբյուրների բանասեր Աբաբեր Նրևանլին, 1972 թ. «Պատմա-բանասիրական հանդեսում» (№ 1, էջ 103—114) հրապարակելով վերոհիշյալ 31 առակները (ցավոք, բազմաթիվ սխալներով), համոզված է եղել, որ դրանք 1722 թ. Թավրիզում գրի է առել՝ Նդիա Մուշեղյանը:

Ա. Նրևանլին իր այս հրապարակման ժամանակ լիորձ չի արել որոշելու այդ առակների ծագումը, նրանց բնույթն ու առնչությունները հայերեն բնագրին զուգահեռ բերված ֆրանսերեն առակների հետ և բավարարվել է միայն արձանագրելով, որ «առակներին հաջորդում են դրանց ֆրանսերեն թարգմանությունները»⁵: Այլ կերպ ասած, Նրևանլին ֆրանսերեն առակները թարգմանված է համարում հայերենից: Իրականում, սակայն, ինչպես ցույց է տալիս հայերեն ու ֆրանսերեն բնագրերի համեմատությունը⁶, հայերեն առակները Նդիա Մուշեղյանը ոչ թե գրի է առել, այլ թարգմանել է ֆրանսերենից:

Հիմնավորենք մեր այս եզրակացությունը:

Նախ նշենք, որ խնդրո առակա առակները գտնվում են 1722 թ. հունվար ամսով թվագրված Ե. Մուշեղյանի ֆրանսերենի ուսումնասիրման տետրում: Տետրի էջերը երկսյուն են. ձախ կողմում հայերեն առակներն են, իսկ հանդիպակաց աջ սյունակում՝ ֆրանսերենը, և ոչ թե հայերենին հաջորդում է ֆրանսերենը, ինչպես գրել է Ա. Նրևանլին: Այս հանգամանքը այն նշանակություն ունի, որ ընդօրինակման այդ ձևը ուսուցողական բնույթ է ունեցել, նման նպատակով նույն այդ տետրում թարգմանված է նաև «Հովվական խաղն ի գիշերին» միստերիան, որի վերջում բերված են առանձին ֆրանսերեն բառերի բացատրություններ:

XVII դարում Եվրոպայում, շնորհիվ Նեոպոսի առակների լաֆոնտենյան մշակումների, աշխուժացում էր ապրում առակի ժանրը: Անգամ հայերեն «Աղվեսագրի» հրատարակությունը 1668 թ. Ամստերդամում և դրա հետագա հրատարակությունները 1683 և 1698 թթ. կարելի է այդ

1 Ըստ «Հայ հնատիպ գրքի մատենագիտական ցուցակի (1512—1800)» (Երևան, 1963, էջ 32), «Աղվեսագիրքը», հավանաբար, ունեցել է մի այլ հրատարակություն ևս՝ 1678 թ., բայց այդ գրքից օրինակներ չեն պահպանվել:

2 Նդիա Մուշեղյանի մասին մանրամասն տե՛ս «Նդիա Կարենցու Դիվանը» (Նյութեր Մեր-ձավոր Արևելքի և Անդրկովկասի պատմության), առաջաբանը և ծանոթագրությունները պրոֆ. Ա. Գ. Աբրահամյանի. Երևան, 1968: Բ. Լ. Չուբակյան. Նդիա Մուշեղյանի (Կարենցու) գրադարանը.— ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հաս. գիտ.», 1983, № 1, էջ 61—74:

3 Историко-дипломатическое управление МИД СССР. Архив внешней политики России (АВПР), фонд «Сношения России с Арменией», 1724, оп. 100/1, д. 7, с. 20—31.

4 «Պատմություն իմ կարճատև ի վերայ անձկությանց Նդիայի Աստուածատուրեան Մուշեղյանց, զորս կրեցի ի աղվէն Ֆուսկաց, մանաւանդ ի խաբեբայ կրօնաւորացն նոցա և ի սուտ խապարց և բարեկամ կոչեցելոց»։ Վիեննայի Մխիթարյան մատենադարան, ձեռ. № 980: Համառոտության համար այսուհետև այս պատմությունը անվանում ենք «Հուշամատյան»:

5 «Պատմա-բանասիրական հանդես», 1972, № 1, էջ 104:

6 Համեմատությունը կատարել ենք Մատենադարանի աշխատակից, ֆրանսերենին քաջահմուտ Արիա Կեսոյանի օգնությամբ:

Հետաքրքրության յուրովի արձագանքը համարել հայ իրականության մեջ: Եղիա Մուշեղյանը որ այդ տարիներին մեծ ոգևորությամբ բանահյուսական նյութեր էր հավաքում, անկասկած առնուշադրության շեր կարող մատենել նաև առակի ծանրը, մանավանդ, որ նա, շնորհիվ «Աղվեսագրերի», որից մեկ օրինակ ունի իր անձնական գրադարանում⁵, ծանոթ էր հայկական միջավայրում տարածված առակների բնույթին: Թերևս կարելի էր ենթադրել, որ նա իրեն ծանոթ հայկական առակներն է գրի առել ու թարգմանել ֆրանսերենի, որպիսի գայթակղություն ունեցել է Ա. Երևանյանին, բայց դա բացառվում է, որովհետև Եղիայի տետրի ու «Աղվեսագրերի» միայն հետևելով հինգ առակներն են, որ ընդհանուր սյուժե ունեն.

Եղիա Մուշեղյան

«Աղվեսագիր»

2. Մարդ ու ընկուզի ծառ
8. Մին էշ ու մին գէլ:
11. Առիւծ հիւանդ:
14. Ագռաւ ու աղուէս:
29. Մին շուն:

- ՃԻԸ. Այր մի և ընկուզ և ձմերուկ:
- ՃԳ. Գայլ և էշ:
- ՉԵ. Առիւծ և աղուէս և արջ:
- ՂԳ. Գայլագռաւ պանիր ի կտուցն և աղուէս:
- Բ. Թագաւոր և շուն և շուքն:

Մեծ տարբերություններ կան նաև Եղիայի ու «Աղվեսագրերի» նույն առակների պատումների մեջ: Բերենք միայն մեկ օրինակ.

Եղիա Մուշեղյան

«Աղվեսագիր»

14. Մին ագռաւ մին ձոթ պանիր առեալ էր մին տան կտրիցն: Ընկուզի ծառի ծայրին նստել է, որ ուտէր: Աղվէս իրան տեսաւ, որ բերանումն պանիր ունէր: «Այ պարոն ագռաւ,— ասաց,— ինչ որ քեզ վրա ինձ ասացել էին ողորդ ա, թէ ամէն հաւքի մէջ քանզ քեզ սիրուն չըկայ, քո թէպուրն ձնի պէս սպիտակ այ և թէ ձայն ունէիր էնչանք քաղցր, որչանք քո թէպուրն սիրուն ա, իրաւի արժանի կլինէիր անասնոց թագաւոր դառնալ»:

Ագռաւն աղուէսի թիթայն սրտի տաքութենով կլսէր և, հպարտութենով ուռեալ, սկսաւ ձայն հանել: Իր կտուցը բռնաց բացել էր՝ պանիրն ծառի տակն վայր ընկաւ: Աղուէսն հափեց և ագռաւի վրա ուղիւսանտ անելոյ հետ փախաւ պնաց:

Խրատ.

Օվ որ քեզ հետ թիթալ կու խոսի և քեզ կգովէ, շատ անգամ քեզ վրայ ուղիւսանտ կանէ և ուզում ա քեզ խափէ:

Ե. Մուշեղյանի տետրում ընդամենը 31 առակ է ընդօրինակված, որոնց համեմատությունը եզրպոսի հայտնի առակների քննական բնագրի⁹, ինչպես նաև դրանց լաֆոնտենյան մշակումների¹⁰ հետ, ցույց է տալիս, որ 24 առակ, անշան տարբերություններով, համընկնում են եզո-

լԳ. Ագռաւ մի պանիր ունէր ի բերան, և նստէր ի բարձր աւանդակ տեղուջ: Իսկ աղուէս փորձ առնոյր ի նմանէ հանել զպանիրն: Եւ մատուցեալ մօտ անդր և զակն ի նա հայեալ, երանի տայր բնութեան, զի սեաթոյր գունով և զիշերոջ մանուկ, և վայելէ քեզ ծաղկիլ ի գունոյդ: Այլեւ զօրութիւնդ քո ի քեզ, որչափ ոչ այլում, բայց և իմաստութիւնդ և ոչ ինչ ևս արգել ունէր զթուգաւորութիւնդ զարծուով զանց արարեալ ամենակին: Եւ թագաւոր հաւուց եթէ ձայն գոյր, և ոչ ամենեկին կարօտ գտեալ էիր յիրիդ:

Դրդուեցաւ ի գովութենէն ագռաւն և զմեծածայնութիւն ցուցանել կամեցեալ, եբաց զբերանն և գոչեաց յոյժ մեծ և պանիրն ի վայր անկեալ որս լինէր աղուէսուն: Եւ նա աուցեալ կրակովն ձայն քո ի քեզ, ասէ, կարի քաջ ով ագռաւ, բայց ի մտաց պակաս ես:

Չայս առասպելս գիտելով մի երբէք պատրիցիս ի սուտակասպաս գովութենէ:

7 Գիրք աշխարհաց և առասպելաբանութեանց, որ է Աղուէսագիրք, ի Սուրբ էջմիածին Երեմիայ վարդապետէ. Լիվոռնայ, 1698: Համապատասխանաբար տե՛ս Ն. Մ առ. Ժողովածոյց առակաց Վարդանայ. մասն Բ, Ս. Պետերբուրգ, 1894, առակներ ՃԻԴ, Խ, ՂԶ, ԻԴ, ՃԶԳ:

8 Տե՛ս ՀՄՍՀ ԳԱ «Լրաբեր հաս. գիտ.», 1983, № 1, էջ 73: Այս ցուցակը Ե. Մուշեղյանի սպարտաստել է 1720 թ. ապրիլի 30-ին

9 Եզրպոսի առակները, ուսերենից թարգմանեց Վարդգես Բաբայան. Երևան, 1972:

10 Առակը Լաֆոնտենի, թարգմ. Մեսրոպ Նուպարյանց. Թիֆլիս, 1899:

պոսյան առականների նետ, իսկ մնացյալ յոթը իրենց զուգահեռներն ունեն լաֆոնտենյան տարբերակներում:

Ստորև բերվում է Ե. Մուշեղյանի տետրի հայերեն առականների և եզրպոսի ու լաֆոնտենյի տարբերակների համեմատական աղյուսակը¹¹:

	եղիա Մուշեղյանի քարգսաճած առականները	Եզրպոսի առականները	Լաֆոնտենի առականները
1	Աքլոր և ալմազ	...	Աքաղաղ ու մարգարիտ—30
2	Մարդ ու ընկուզի ծառ	...	...
3	Կատու ու մկներ	...	Խորհուրդ մկանց—36
4	Գեղեցի ու խիզաններն	Գյուղացի և իր որդիները— 100	...
5	Մարմին ու իր բաժինքն	Փորը և ոտքերը—127	Փորն ու անդամներ—59
6	Մեղր ու ճանճերն	Ճանճերը—109	...
7	Զեյթունի ծառ ու էղեբի	Կաղնին ու եղեգը—105	Կաղնի ու եղեգն—34
8	Մին էշ ու մին գէլ	էշն ու գայլը—148, 207	Ձի ու գայլ—109
9	Աղուէս ու մարդի գլուխ	Աղվեսն ու դիմակը—90	...
10	էշ ու ձի ու դեղեցի	էշն ու ջորին—146	էշ ու ձի—138
11	Առիւծ հիւանդ	Առյուծը, գայլն ու աղվեսը —177	Առյուծ, գայլ ու աղվես—159
12	Մին գէլ, մին պառաւ	Գայլն ու պառավը—137	...
13	Աղուէս ու հաղող	Աղվեսն ու խաղողը—86	Աղվես ու խաղող—72
14	Ագռաւ ու աղուէս	Ագռավն ու աղվեսը—125	Ագռավ ու աղվես—14
15	Աղուէս ու լակլակ	...	Աղվես ու արագիլ—29
16	Առիւծ ու մօծակ	Մոծակն ու առյուծը—172	Առյուծ ու ճանճիկ—42
17	Գէլ ու դառն	Գայլն ու գառը—136	Գայլ ու գառնուկ—26
18	Քամի ու արեգակ	Բորեասն ու արեւը—97	...
19	Աղուէս ու այծն	Աղվեսն ու այծը—84	Աղվես ու նխապ—65
20	Որսաբար ու վէրի կօվ	Եղջերուն ու խաղողը—108	Եղջերուն ու որթատունկը— 113
21	Վէրի էշ ու տանու էշ	Վայրի ու տանու էշը—234	...
22	Աքլորք ու կաքաւ	Աքաղաղներն ու կաքավը— 89	Կաքավ և քաղաղներ—211
23	Անասունք ու առիւծ	Առյուծն ու վայրի էշը—188	Երինջ, այծ ու մաքի ընկեր եղած—19
24	Սայրն յըղի	...	Լեռ երկանց մեջ—111
25	Գէլ ու կռունկ	...	Գայլ ու արագիլ—71
26	Դաշտի մուկն ու տան մուկն	Դաշտային ու տնական մուկ- ները—197	Քաղքցի մուկը և դաշտեցի մուկը—25
27	Մին կնիկ, մին հաւ	Այրին ու հավը—101	...
28	Մին կնիկ ազահ	Ոսկե ձկեր ածող սագը—113	Ոսկե հավկիթ ածող հավը —111
29	Մին շուն	Շունը և մսի պատառը—128	Շուն ու ստվեր—139
30	Մին հալւոր մարդ ու մահ	Ծերունկն ու մահը—102	Փայտահատ ու մահ—28
31	Այծյամ ու կովեր	...	Տիրոջ աչքը—98

Անհրաժեշտ է այստեղ արձանագրել, որ Եղիայի թարգմանած առականներն ու եզրպոսի հիմք-առարկանները հիմնականում համընկնում են: Բերենք մեկ օրինակ միայն.

¹¹ Առականների խորագրերին հաջորդող թվերը նշված գրքերի էջահամարներն են:

Եղիա Մուշեղյան

Եզրույթ

9. Մին աղուսն քաղաք էկաւ ման գալ, մին քանտարարի խանութ մտաւ, տեսաւ մին փայտէ գլուխ խիստ լաւ շինած, առաւ իր առաջնու ռտնեւոյ և լաւ մտիկ անելով, յետոյ աւաւ ասաց. «Մին սիրուն գլուխ դրսիցն, ափսոս, որ մէջն փուշ ա, մին դրամ եղուղ շունի»:

Խրատ

Մարդկանց և կանանց մէջն շատ կկտնւի այնպէս կերպարանքով, սիրուն, լաւ հագած, ակնկալած, ոսկով և արծաթով դարդարած, ինչ որ դրսիցն էրևում ա՛լ լաւ ա, ամա մէջը փուշ է, շատ անգամ այնպիսիքն անխելք և անգէտք են:

27. Աղվեսն ընկաւ արձանագործի արհեստանոց, ուր եղած-չեղածն իրար խառնեց: Եվ այնտեղ նրա աչքովն ընկաւ ողբերգակի դիմակը: Աղվեսը բարձրացրեց ու ասաց. «Ինչ գլուխ է, լալց ուղեղ շունի»:

Առակս վերաբերում է այն մարդուն, որ փառահեղ մարմին ունի, բայց հոգին դատարկ է:

Հետևյալ փաստարկները ևս ապացուցում են, որ Եղիայի հայերեն առակները թարգմանված են ֆրանսերենից.

ա. ֆրանսերենով բերված առակների լեզուն կատարյալ միջին ֆրանսերեն է, ինչպես հաստատեցին 1982 թ. աշնանը Երևանում գտնվող ֆրանսիացի անվանի բանասերներ պրոֆ. Ֆրեդերիկ Ֆելդին ու պրոֆ. Ժան-Պիեռ Մահեն: Եղիա Մուշեղյանը, որ, իր իսկ վկայությամբ, ֆրանսերեն իր նամակներն ու ղեկուցագրերը գրելիս դիմում էր կաթոլիկ հայերի օգնությանը, հազիվ թե կարողանար այդպիսի կատարյալ ֆրանսերենով թարգմանություններ կատարել:

բ. Ֆրանսերեն բնագրում կան մի շարք բառեր ու արտահայտություններ, որոնք բաց են թողնված հայերեն թարգմանության ժամանակ: Եթե առակները հայերենից թարգմանված լինեին, ապա ֆրանսերենում այդ բառերի ու արտահայտությունների անհրաժեշտությունը չէր լինի:

գ. Ֆրանսերեն բնագրի ընդօրինակության մեջ եղել են կոսիտ տառասխալներ ու բացթողումներ, որոնց մի մասը, հավանաբար, վերստուգման ժամանակ նկատել է ինքը՝ Մուշեղյանը և ուղղել է բնագրի վրա:

դ. Առակների հայերեն թարգմանության մեջ կան բայերի ժամանակների բազմաթիվ անհամաձայնություններ, որոնք հետևանք են թարգմանության ժամանակ թույլ տրված սխալների: Բնագիրը հայերեն լինելու դեպքում հազիվ թե Եղիան նման կոսիտ սխալներ թույլ տար:

Պետք է ենթադրել, որ ե. Մուշեղյանը, Պարսկաստան հաստատված կաթոլիկ քաղաղիկներին մոտ ծանոթանալով Եզրույթի առակների ֆրանսերեն թարգմանության ինչ-որ տարբերակի և անդրադառնալով դրանց մեծ մասի բացակայությանը հայկական առակագրերում, սիրով ձեռնամուխ է եղել դրանց թարգմանությանը, մասնավորապես միաժամանակ դրանով նա պետք է ավելի հմտանար ֆրանսերենին: Առակների թարգմանությունը կատարված է պարզ ու հասկանալի, ժամանակի խոսակցական արևելահայերենով: Թարգմանության մեջ գործածված մի շարք բարբառային բառեր ու ձևեր, ինչպես նաև բազմաթիվ պարսկերեն փոխառություններ, Նոր Զուգայի բարբառն են հիշեցնում: Հավանաբար Եղիան, որ 1720-ից մինչև 1722 թ. կեսերը հաճախ էր լինում Նոր Զուգայում, այս առակները թարգմանել է այնտեղ գտնված ժամանակ և իր շրջապատին հասկանալի լինելու համար աշխատել է տեղական բարբառին բնորոշ տարրեր մտնեցնել իր լեզվի մեջ: Այս ենթադրության օգտին է խոսում առակներից մեկի («Ծուն ու ստվեր») տեղանշանը: Սպահան քաղաքի անվան հիշատակումով, Թերևս կարելի էր ենթադրել, որ առակները ինչ-որ մի ալլ անձնավորության թարգմանությունն են եղել և ե. Մուշեղյանը սոսկ դրանց ընդօրինակողն է: Նման եզրահանգումը բացառվում է, որովհետև այդ դեպքում Մուշեղյանը անպայման կնշեր իր աղբյուրը և կամ թարգմանին. իր բոլոր աշխատանքներում նա բժականորեն պահպանել է այդ սկզբունքը:

Եզրույթյան առակների թարգմանությունը, ինչպես նաև տեղյակությունը հայ միջնադարյան առակագրությանը, Եղիային առակի ժանրի բնագավառում շատ բան են սովորեցրել, ուստի այս թարգմանությունից 25 տարի հետո, 1747 թ., երբ նա գրել է վերջում իր կյանքի ողբապալանը՝ իր խոսքը ազուցում է առակներով, ասացվածքներով ու փոքրիկ զրուցաներով: Օժտված լինելով վիպերու անժխտելի ձիրքով, Եղիա Մուշեղյանը իր «Հուշամատյանը»

շարադրել է աշխույժ ու կենդանի լեզվով, համեմված ժողովրդական բառ ու բանով. դեպքերի նկարագրությունը նրա մոտ վերաճում է փոքրիկ զրույցների ու ակնարկների, իսկ պատմական իրական անձինք՝ ընդհանրացված գեղարվեստական կերպարների:

Այս «Հուշամատյանում» Մուշեղյանը տարբեր առիթներով իր հակառակորդների բարոյական կերպարը, նրանց ընչաքաղցությունը, անձնասիրությունն ու մարդատյացությունը բացահայտելու համար բերել է շորս գողտրիկ առակներ՝ «Ճգնավոր մուկը», «Անձնասեր կրոնավորը», «Սոված արջը» և «Գորտն ու կարիճը»¹²: Սրանցից առաջին երկուսի աղբյուրը Եղիան համարում է 1717 թ. Արեւելյան հնդկական ընկերության Թավրիզի մասնաճյուղի տնօրեն մարտնչի Պոռեկարին (Բերգարին), Իսրայել Օրբու պարսկական դեսպանության երբեմնի քարտուղարին: Այս տարիներին Ե. Մուշեղյանը աշխատում էր Պոռեկարի մոտ և սերտ շփում ուներ նրա հետ: Պոռեկարը տեսնելով Եղիայի կույր նվիրվածությունը կաթոլիկ կղերին, նրան քանիցս զգուշացնում է հոգեւորականների խարդավանքներից և նրանց բուն էությունը բացահայտելու համար տարբեր առիթներով առակներ է պատմում, բայց Եղիան ուղարկության չլ առնում: Այս առակները հետագայում, կյանքի վերջին տարիներին, նա վարսյետորեն վերապատմում է իր «Հուշամատյանի» մեջ:

Առակներից մեկի՝ «Ճգնավոր մուկի» տարբերակը մշակված կ'ս լաֆոնտենի մոտ¹³: Հավանաբար ֆրանսիացի Պոռեկարը զրանք լսել կամ կարդացել է իր հայրենի երկրում: Չենք կասկածում, որ մյուս երկու առակներն էլ նվիրված են ծագում պիտի ունենան: Այս առակները իրենց կառուցվածքային կատարելությամբ, խոսքի ղեկավարությամբ և ընդհանրապես մշակվածությամբ վկայում են Եղիայի վիպելու կարողությունը, նրա զրական օժտվածությունը: Դասական առակներից սրանք տարբերվում են միայն վերջաբան հանդիսացող բարոյախոսական եղրակացության բացակայությամբ, բայց այդ եղրակացությունն ինքնին հասկացվում է որչ պատմից: Առակների լեզուն զրաբար է՝ զերծ բարբառայնությունից ու օտարաբանությունից: Ֆրանսերենից Եղիա Մուշեղյանի թարգմանած, ինչպես նաև իր «Պատմության» մեջ զրի առած առակները ոչ միայն մի նոր էջ են բացում հայ-ֆրանսիական զրական կապերի պատմության մեջ, այլև հարստացնում են հայ միջնադարյան գեղարվեստական զրականությունը:

* * *

Ինչպես նշվեց վերը, Եղիա Մուշեղյանի թարգմանած 31 առակները Ա. Երևանյանի 1972 թ. հրապարակել է «Պատմա-բանասիրական հանդեսում» (№ 1, էջ 103—114) բնագրական աղավաղումներով ու սխալներով¹⁴: Նկատի ունենալով այս առակների կարևորությունը Եղիայի զրական ժառանգության, ինչպես և առակների լեզվի ուսումնասիրության առումով. ստորև վերահրատարակում ենք զրանք՝ հիմք ունենալով Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվի «Ռուսաստանի հարաբերությունները Հայաստանի հետ» ֆոնդի 100/1 ցանկի 7-րդ գործը՝ էջ 20—31: Ի հավելումն զրանց՝ առաջին անգամ հրապարակվում են նաև Ե. Մուշեղյանի «Հուշամատյանում» (Վիեննայի Մխիթարյան Մատենադարան, ձեռ. № 980, էջ 26բ—28ա, 28ա, 263բ, 270ա) զրի առնված շորս առակները: Վերջում կցվում է հրապարակվող առակներում առկա օտար և բարբառային բառերի բառարանը, որտեղ ստուգաբանվում են այս բնագրերում առաջին անգամ հանդիպող մեր բառարաններին անծանոթ բառերը:

Բ. Լ. ԶՈՒԳԱՍՉԱՆ

¹² Առակների խորագրերը մերն են—Բ. Զ.:

¹³ Տե՛ս Առակք լաֆոնտենի, էջ 144:

¹⁴ Բերենք մի քանի օրինակ.

Առակ 1. պատահական այմազ. ուղղելի՝ պատուական այմազ:

Առակ 2. Զարմացիր այն իմաստութիւն. ուղղելի՝ զարմացիր աստուծոյ իմաստութեան...

Առակ 4. շատ ճղքեր առկաւ. ուղղելի՝ շատ ճղքեր առաւ:

Առակ 5. հալող իկին. ուղղելի՝ հալողիկին:

Առակ 10. էն ժամանակ ձին. ուղղելի՝ էն ժուկն ձին:

Առակ 15. դայթաղ. ուղղելի՝ դայր ազ (պարսկերեն է՝ «բացի» նշ.):

Առակ 22. Զպայ դու ֆոանկ. ուղղելի՝ Ապա դու ֆոանկ:

Առակ 28. էն կնիկն. ուղղելի՝ ին կնիկն:

Առակ 31. էս դիմն էն դիմն. ուղղելի՝ էս դիհն, էն դիհն:

ԳԻՐ ԱՌԱՎԱՅ ՀԱՅ ԳՐՈՎ ԵՒ ԲԱՌՈՎ

1. Աւելու և ավազ

Մէկ խօրօզ մէկ օր գետինն քութութիւն տալով, աղբի մէջն մէկ լաւ ավազ գտաւ, ճանկի մէջն քոնեց և աչքերն վրէն պշուցել էր, ասաց. «Հէր է սա մին պատուական ավազ. մէկ ավազը քրաշ շատ փող կուտէր, որ էս առնէր, ամա ի՞նչ պէթք ա մէկ ավազ մէկ աքլորի էլ լաւ էր ինձ, որ մին գարի հաստ դռնէյի կամ մին փոքր հացի փշրանք»:

Խրատ

Իմաստուն մարդ էն անճախ կուգէ, որ իրան պէտք է, ինչի՞ ման ես գալիս էնտուր, որ քիչ պէտք չէ:

2. Մարդ ու քնկուզի ծառ

Մէկ մարդ մէկ օր մին մեծ ընկզի ծառի տակն կշտի է յընել: Ընկուզի ծառի մօտն կէր շատ-շատ դըդում: Էն մարդն վերեն մտիկ անելով ընկզի ծառին պտղին և ներքեն մտիկ անելով դըդ-մին, ասում էր իւր մտքումն. «Ինչի՞ խէնց պտիկ թուին էսէնց մեծ պտուղ կուտայ և ինչի՞ էսէնց հաստ ծառն էսէնց պտիկ յեմիշ կուտայ: Կումանքս, թէ աստուած քանզ էն է՛լ լաւ գիտէր զատերն շինել՝ մէկ մեծ ծառին պիտէր մեծ պտուղ և մին պստիկ թիին պստիկ պտուղ:

Երբոր էն ասում էր, էրես ա մէկ ընկուզ ծառիցն փրթաւ և ընկաւ իրան գլխի վերեն: «Օ՞վ առէր,— աղաղակեց,— էտ ամէն ինչ, որ դու շինել ես, լաւ ես շինել: Եթէ ընկզի ծառի յէմիշն էս պրտի շանքնին լինէր՝ ես էլ ողջ չէյի մնալ»:

Խրատ

Հարմացիր Աստուծոյ իմաստութեան և իրան գործոց վերա: Եւ ինչ որ շինել ա ամենակն մի՛ անել՝ թէ վատ է:

3. Կատու և մկներ

Մին կատու անունն Միտու մի տան միշումն շատ մկներ կբռնէր. օրն քիչ-քիչ Ը (8) ու Ժ (10) կուտէր: Մկներն տեսնելով, որ իրանց ազգն հատնում էր, գլխըրում էր, բողբոլեցան, թէ՛ «Ի՞նչ անեմք, որ մեր թշնամու զուլմիցն պրծնիմք»: Էն բանի վրա շատ ժամանակ խորհելոյ յե-տե վերչն ամէնն միաբանեցան, թէ պիտէր մին պստի զանկ կատուի վղիցն կապել: Էն ֆանտօվն ասում ին. «Երբոր կատուն գուգայ, որ մեղ բռնէ, զանկի ծայնն կլեմք (կլսեմք) և փախչիմք մեր բնի մէջն»: Էն ժամանակն մին մեծ մուկն, որ կանչել էյին, որ մկներին գետին վերակացու լինէր, երկու ոտներին վրա կանգնելով, «էյի անխելք,— ասաց ծիծաղելով,— ձեր միշումն օվ ա՛ սըր-տոտ, որ կատուի վղիցն զանկն կապէ»: Էն խօսք, որ ասաց, ամեն մկներն սուս կացին:

Խրատ

Առաջ քան զմին իբ[մ]ին հաստատես մին մասլահաթի վրա, նախ լաւ միտք արա, թէ էն քանն լինելո՞ւ բան ա:

4. Գեղեցի ու խիզաճներն

Մին գեղեցի հիւանք շատ տղերք ունէր. էն տղերքն հանապազ մէկ-մէկի հետ կոխ կանչ-յին: Իրանց հայրն ընտոնց պարիշացնելու համար մէկ օր, որ ողջուկ էն իրան կշտին էյին, շատ ճղքեր առաւ, ողջուկ միատեղ կապեց, մին դաստա շինեց, յետո էն դաստայ իր ամէն տղերքնե-րին ձեռքն տվեց, ասաց. «Էս ճղքներն կոտորեցէք, եթե գիտէք»: Առան և շատ յուժ արին, որ կոտորեն, ամա չկարացին: Էն ժամանակն հիւանդն դաստէն առնու կբանա, հետ անէ և ճղքներն մէկ-մէկ առեալ ողջուկն էլ կկոտորէ առանց ջաֆայ ուտելոյ: Էն ժամանակն իրան խիզաճներին ասաց. «Հէրէն ա, որ ձեզ կհանդիպի. որչանք վախտ մէկ-մէկու հետ պարիշ եք՝ մօնչ ով չի գի-տել ձեզ դարար տալ, ամա երբոր կու ջոկուէք, ձեր թշնամեաց հեշտ գլխի ձեր տունն քանտել:

Խրատ

Էստօվ գիմանամք, թէ բաժանումն և ջոկումն ամէն շարեաց պատճառ է. ի՞նչ օրինակ միա-քանութիւն և սէրն ամէն յվարեաց պատճառ ա:

5. Մարմին ու իր բաժիններ

Մին օր մարմինի անդամներն հալոդիկին հետ կոխ արարին. «Մեք ամենեքեան,— ասում ին,— մարմնի առողջութեան համար անդադար բանի եմք կենում, աչքն մտիկ անելով, ականջ լսելով, լեզու խօսելով, ատամներն ծամելով, ձեռներն բանի կենալով, ոտներն ման գալով, էտ թամպալ ստամոքն պարարտանա, կշտանա և շատ մսով լցվի, և էլ ոչինչ անէ: Բաց թողումք և էստուց յետև էլ իրան համար բանի չը կենամք»:

Ապա սկսան էլ զատ շանել իսկի. աչքն էլ չէր տեսնում, ականջն էլ չէր լսում. լեզու էլ չէր խօսում, ատամներն էլ չէին ծամում, ձեռներն էլ բանի չէին կենում, ոտներն էլ ման չէին գալիս. ինչ հանդիպեցաւ մին քանի օր յետև մարմին և ամենայն անդամն էնչանք տկարացան, որ ըսկի ղուվատ չունէին: Էն վախտ իրանց միշտմն ասացին. «Երբոր մեր միշտմն հաշտութիւն կէր շաղ էլինք և յուժով: Անճախ էն ժամանակիցն, որ մեք բաժանվել եմք, էս խեղճ հալի մէջն էմք յընկել, ապա պիտի, որ մեր կողմիցն պրծնումք և առաջի պէս խաղաղութեամբ կենամք. էն ժամանակն աչքն սկսաւ մտիկ անել, ականջն լսել, լեզուն խօսիլ, ատամներն ծամել, ոտներն ման գալ, ձեռներն բանի կենալ և մէ քանի օր յետև մարմին և անդամքն իւրեանց տկարութենիցն պրծան:

Խրատ

Շատ հետ որ գուզեմք ուրիշի վատութուն անեմք մեր վրէն գուգա. բաժանումն ցրուէ, միաբանութիւն կու պահէ:

6. Մեղր ու ճանճերն

Մէկ օր մէկ տան մէջն կեր մին աման լիքն մեղր. ճանճերն շուտ թռան էն անուշ կերակրի համն տեսնուն. ամա երթալն փողիմանեցան, ղէրա էնտոնց ոտներն մեղրիցն կպան բանտ յեւան. հենց որ շի գիտացին դուս գալ, խելտեցան.

Մին պառաւ ճանճ, որ քանզ էնտոնք շատ խելք ունէր, կասէր մեռնելու վախտն. «Վայ մեղրնտուր համար, որ յուզեցինք մին զամէն զովդ անել, մեք շարաշար կու մեռանիմք»:

Խրատ

Էլ ամէն օր օրկրամոլութիւն շատ-շատ շարեաց պատճառ ա:

Մին պստիկ ղովդ մեղաւոր հէ՛մ հողոյն, հէ՛մ մարմնոյն կեանքն կորցնէ. ի՞նչ խելութիւն:

7. Զեյրունի ծառ ու էղեֆի

Մէկ պաղշի միշտմն կէր մէկ ծիթենի և մէկ էղեֆի: Ծիթենի ծառն հալարտանում էր, և ինքն իրենքն գովում էր, թէ արմատքն խորիւրդ ունէր, մին հաստ փոք, մեծ և բարձր ճղքերն և թէ ֆօթօնայի և քամու ղէմ էր կանգնում, և էղեֆին ուղիանտ էր անում, և իր տկարութիւն իրան յերեւ էր տալիս: Մին բարակ քամի, որ փչում ա, կասէր. «Ամէն կողմից կհռանաս և յուժ չունիս, որ ղէմ կանխես: Եբոր էն ասում էր, ահայ մին սաստիկ ֆօթթունա վեր կու կենա մին մեծ քամովն: Իղեֆն շուտ կեռացաւ քամու խաթրովն և իրան իսկի զարար չելաւ, ծիթենի ծառն պիտու մնաց, քամու դիմացաւ, բայց քամին յաղթեց, ծիթենի ծառն քօքահան գետին քցեց:

Խրատ

Հնազանդի՛ր քանզ քեզ յուժովին, սկի մի՛ պարծացնել քեզ, թէ քանզ ուրիշներն մեծ ես: Ամենևին մարդի մի՛ անարգել իր բնական պակասութենիցն:

8. Մին էշ ու մին գէլ

Մին փուշ էր մտել մին իշի ոտն, հենց, որ շէր գիտել ման գալ, դետնի վրեն էր յընկել: Տքալով, աղաղակելով, խիստ արտասուք էր թափում, մին գէլ էնտեղանց անց կացաւ և, տեսնելով գէլն էն խեղճ հալի մէջ, խեղճ էկաւ: Էշն գէլին ասաց. «Ահայ աղայ, եթե գուզէյիր իմ ոտիցս էն փուշն հանել, ես քանի կենդանի եմ քո լաւութիւն չեմ մոռանալ»:

Մօտկանա գէլն և եբոր իշի ոտիցն իր ատամներովն փուշ էր հանում, էշն սկսեց աքցի տալ, և իր յետի ոտերովն խեղճ գէլի ատամներն և շանէքն շարթեց: Ասում են, թէ գէլն էն ժամանակն

սողաղակեց. «Վա՛յ ինձ, էստուց առէջ իմ փէշակն էս էր, որ ուրիշ անասներն կսպանէյի և կուռեկէյի, և Լս ուզեցի այսօր իրանց հէշիմութիւն անել: Էն գտայ, որ ինձ արժան էր»:

Խրա ա

Դուն քո արուեստն բանացուր, տե՛ս, ինչոր գիտես՝ էն արայ:

Մարդ կա, որ քանզի էն էշն <էն> անասուն Լն, որչանք որ նրանց լաւութիւն անես՝ էնչանք ասուակ քեզ վատութիւն անեն:

9. Աղուէս ու մարդի գլուխ

Մին աղուէսն քաղաք կկաւ ման գալ, մին քանտառարի խանութ մտաւ, տեսաւ մին փայտէ գլուխ խիստ լաւ շինած, առաւ իր առաջնու ոտներով, և լաւ մտիկ անելով, յետո ա՛հա ասաց. «Մին սիրուն գլուխ դռսիցն, ա՛խոս, որ մէջն փուշ ա, մին դրամ հղուղ շունի»:

Խրա տ

Սարդկանց և կանանց մէջն շատ կկտնւի այնպէս կերպարանքով, սիրուն, լաւ հագած, ակըն-ձլալած, ոսկով և արծաթով զարդարած, ինչ որ դռսիցն էրևում ա՛ լաւ ա, ամա մէջ փուշ է, շատ անգամ այնպիսիքն անիւնը և անգէտք Լն:

10. Էշ ու ձի ու գեղեցի

Մին գեղեցի մին էշ, մին ձի ունէր, էնտոնք բանացնում էր, որ իր ցորենն քաղաքն տանին, և ծախէ: Մին օր ճանփումն էր, էշ ձիան ասաց. «Ախպէ՛ր, մեր տէրն իմ քամակին վրա դրել ա մին կրկին ծանր բեռն, խիստ ծանր ա, չեմ գիտել տանիլ, շաֆախաթ արա էստուց մին փոքր վեր կալ, թէ չէ ես իմ բերի տակն վէր կնկնիմ և կմեռնիմ: Ձիւն իրան պատասխան էրեստ ասաց. «Ախ-պէ՛ր, ամէն մէկ իրան բեռն տանի՛ շատ չէ, իմ բեռն էլ ա ծանր. բեռնտ տար դոր որ գիտես»: Ապայ էշն ուժ կանէ և առաջ կերթայ 2—3 սահաթ, ամա վերջն ուժահատ բեռնտակն ընկնի և մեռնի: Էն վախտն դեղեցին էշի բեռն վէր կաշնու և ձին վրէն դնէ, յետն էշն մաշկէ, և կաշին էլ ղնէ ձիան վերա: «Վա՛յ ինձ,— ասաց էն ժուկն ձին, որ ամէն մէկ քայլ էրթալով քթահար էր անցնում էնչանք ծանր բեռի տակն,— վա՛յ ինձ, ես չուղեցի էշի բեռն թեթեացնել, ապա պիտի համ թամամ բեռն, համ իշի կաշին էլ տանիմ:

Խրա տ

Ամէն օր կհանդպի, որ օվ որ շի յուզել մին քիշ ճաֆա քաշէ, մեծ ճաֆի մէջ կնկնի: Որչանք գիտես ամէն մարդի շաֆախաթ արա. քանի որ մարդի լաւութիւն կանես, քեզ էլ շահ գլնի:

11. Առիւծ հիւանդ

Մին օր առիւծն հիւանդացաւ, Լբոր ուրիշ անասունքն էն խապարն իմացան, ամէն բոլոր-վեցան, դաս-դաս էկին առիւծի բունն՝ իրանց թագաւորին տեսութիւն. աղուէսն իրանց հետ չէր. Գլլ, որ վաղուց հետեն աղուէսի հետն քէն էր, էն մահանայ բռնեց, որ քէն հանէ: «Տե՛ս, վէլի-նամա թ,— ասաց,— տե՛ս աղուէսի հպարտութիւն, որչանք արժան չր տեսաւ, որ մեզ հետ գէր քո հրամնուց տեսութիւն, քո հալտ հարցանէր»: Էն գլլի խօսքերն առիւծին բարկացուցին աղուէսին ղէմ: Էն վախտ աղուէսն կհասնի և առիւծն բառանչելով՝ «Հարամզատայ,— կասէ,— էտպէս քո թագաւորն կպատուես, կտեսնես, թէ ուրիշ ամէն կենդանիքն իմ առաջն խոնարհեցան, դու միայն քո թագաւորին անհնազանդութիւն կս անում»: «Աստուած լաւութիւն և յերկար կեանք տայ իմ թագաւորին,— ասաց աղուէսն:— Հա՛վատայ. վէլինամա՛թ, թէ էն կենդանեաց ոչ օվ քան զիս սրտացաւ չէ էլել վասն քո լաւութեան: Ես ամէն հէքիմներն, ճառահներն և աթթէրներն տեսա, և էնչանք ման եկա, որ վերջն քո ցաւին ղեղ գտա»:

«Բարօվ եկար,— ասաց աղուէսին առիւծն կակղացեալ,— ինձ թկզ ասա՛, որն ա ղեղն, որ պիտի ինձ լաւացնէ»:

Աղուէսն ասաց. «Հէքիմներն բոլորվեցան մասլահաթ տեսնելու, հետն ողջուկ միաբանեցան, թէ քո հոգամնուց լաւացնելոյ համար քան գայն լաւ ղեղ չըկէր, որ թաղա մօրթած գէլին մորթօվն պատատիլիս»:

էն վախտ առիւծն թուա գէլի վռնն, խեխտեց, մաշկեց և մորթով նորա զինքն պատատեց. ականջն, թէ երոր գելն հառաչում էր, աղուէսն իրան վրա ոշխանտ անելով՝ «Սովորի՛ր, բի՛ւ և անիրաւ, թէ բանպասող և կոռւանի ախր-ախր փորձութեանց ընկնի՛ն, որ ուզում են ուրիշի վրայ գցել»:

12. Մի՛ն գէլ, մի՛ն պառաւ

Մին գէլ քաղցած շիմանիցն դուս ելաւ էկաւ մին գեղ: Մին գիշեր ուր ման էր գալիս էստեղ-էնտեղ լսեց մին պառաւ կնիկն, որ սուս՝ կացնելո՛ւ համար մին էրեխա. որ լալիս էր, ասէր իրան. «Սուս կացի՛ր, թէ չէ քեզի գէլին ետտամ, որ ուտէ»:

Ուրսխացեալ գէլն կուգայ տան մօտն, որ իրան որսն տանի: Անկաճ գնելով՝ լսեց, թէ սլաւուն ասում էր էրեխին իրան խորտին խաղացնելով. «Մի՛ վախնալ, որդի՛, եթէ գելն գուդա՝ կսպանեմք»:

էն շաղ գելն ամանշութենով գնաց՝ ասելով. «էստեղ իսկի ֆայտա շըկայ, ուր մին կերսդ կասեն՝ ուրիշ կերսլ անեն»:

Խրատ

Մի՛ հաւատալ էն մարդի, որ իրան լեզու և իր սիրտն միաբան չեն:

13. Աղուէս ու հաղուղ

Մին օր մին աղուէս քաղցեցած ման էր գալիս ուտելոյ համար, տեսաւ մին մեծ ձիթ հաղուղ, որ վազնի մին ճիւղիցն կախ էր, շատ հետ վեռ թուաւ, որ ափէ, ամա տեսնելով, որ նման էր, որ ափէ, բաց եթող, ասելով. «Բաց թողումք՝ հասնի, դեռ ժուռ ա»:

Խրատ

Սարդ հպարտ համիշա մին մահաճա կրօնէ, որ իր տկարութիւն յայտնի չը լինի:

14. Ագռաւ ու աղուէս

Մին ագռաւ մին հոթ պանիր առեալ էր մին ոտն կտրիցն: Ընկուղի ծառի ծայրին նստել էր, որ ուտէր: Աղուէս իրան տեսաւ, որ բերանումն պանիր ունէր, «Այ ողարոն ագռաւ, — ասաց, — ինչ որ քեզ վրա ինձ ասացել էլին ողորդ ա. թէ ամէն հաւթի մէջ քանդ քեզ սիրուն շըկայ, բո թէպտուն ձնի սլէս սպիտակ այ և թէ ձայն ունէյիր էնչանք քաղցր, որչանք քո թէպտուն սիրուն ա, իրաւի արժանի կլնէյիր անասնոց թագաւոր դառնալ»:

Ագռաւն աղուէսի թիթալն սրտի տաքութենով կլսէր և հպարտութենով ուտեալ, սկսաւ ձայն հանել: Իր կտուցն բռանց բացել էր՝ պանիրն ծառի տակն վալր ընկաւ: Աղուէսն հափեց և ագռաւի վրա ուղիւսանտ անելոյ հետ և փախաւ գնաց:

Խրատ

Օվ որ քեզ հետ թիթալ կու խոսի և քեզ կղովէ շատ անգամ քեզ վրայ ուղիւսանտ կանէ և ուղում ա քեզ խափէ:

15. Աղուէս ու լակլակ

Մին օր աղուէսն արագիւլին պատիւ կանչեց բթուն պատուի, լակլակի առաջնն մին մեծ լանկառով խիստ ջրի ցիմա (') բերեց, լակլակն չէր գիտում ուտել, դալր ազ իր ձիղ-ձիղ կտցի ծայրովն, ամա հաս հաս պաս էր կտցատում, քիչ-քիչ էր հափում, ամմա աղուէսն Բ. Գ. (երկու-երեք) թիթա առաց ողջունկն կուլ տուեց, ասպայ արագիւլն խիստ ամօթով մնաց, աղուէսի բնիցն քաղցած դուս ելաւ:

Մին քանի օր յետև արագիւլն իր ամաշութենի քէնն հանելոյ համար աղուէսն պատիւն կու կանչէ և դոր ինքն առաջ արեւր էր իրայ կուշտն կու բերէ մին խիստ ջրի դալիւկայ պլօր շիշի մէջ. շիշի վիզն ձիղ-ձիղ էր: Աղուէսն որ դալիւս տեսնում էր շիշի մէջն շիշի կշտերքն լիզում էր, ամա հապաս-հապաս, իսկի գատ չէր ափում: Էն շաղն արագիւլն ուր ձիղ կտուցն կոխելով շիշի վիզի մէջն ողջուր դալիւս կերաւ, ասպայ աղուէսն շարմանտայ մնաց և խիստ քաղցած դուս գնաց:

Խ ր ա տ

Ով որ ուզում այ ուրիշի խափէ, արժան է, որ ինքն խափուի:

16. Առիւծ ու մօծակ

Մէկ օր մօծակն առիւծի կուշտն իրան ասաց. «Ասում են, թէ դուն քան զամէն անասուն-ն էրն ուժով էս, տեսնումք եթէ ողորդ է, եկել եմ քեզ հետն քուշտի բռնեմ»:

«Դու ո՞վ ես,— ասաց առիւծն:— Եւ որչանք պիտի ըլնի էնչանք պատիկ անասունին յուժ»:

«Յեկ տեսեմք»,— ասաց մօծակն: Եւ նոյն ժուկն մօծակ թե առավ թաւ մտաւ առիւծի քիթն: Առիւծն քիթն ճմռթում էր, որ մօծակն քթիցն հանէր, գետնին թաւալ-թաւալ էր գալիս. իր քիթն է իր դունչն ճանկով ճանկոտտում էր, ամա հապաս-հապաս, ոչինչ չէր գիտել մօծակն քնթիցն հանել:

Էն ժուկն մօծակն առիւծի քնթիցն դուրս թռեալ, տեսել էս, ասաց, թէ՛ «Դոր ես քանզ քեզ էլ յուժով եմ»: Երբ թռչում էր իր յաղթութեան համար հպարտ. ահայ իր անբախտութենով կնկնի գործարարի գործի մէջն. Լնտեղ բանտ կմնայ, գործարարն շուտ զուգայ, իր դործովն մօծակին կպատատէ, կրոնէ կուտէ:

«Վա՛յ ինձ,— ասում էր հոգեւոր մօծակն,— առիւծին յաղթեցի, որ է անասնոց թագաւոր, և ահայ կերակուր դարձեալ եմ ճանաւարին, որ քան դիս էլ փիս աչ»:

Խ ր ա տ

Քո թշնամիցն հանապազ վախիւր և իրանիցն պատրաստ կացիր, որչանք տկար լինի՝ գիտէ քեզ վնաս տալ: Ինչ բարի գործ, որ գործես, և որչանք շնորք, որ ունիս, մի՛ հպարտանալ. Շատ անգամ դէմ կանգնիմք և յաղթեմք մեծ փորձութեանց մէջն, և թեթև փորձութեանց մէջ յաղթուիմք:

17. Գէլ ու գառն

Մին օր մին գառ ու մին գէլ մին առիւծումն ջուր ին խմում. գէլն վերեն, դառն ցածն: Գէլն ագռին շլիւղ անելով՝ «Շան որդի,— ասաց,— ինչի՞ պղտորես ջուրն, որ ես խմում եմ»:

«Թողութիւն արա՛, պարո՛ն,— ասաց գառն՝ վախից դողալով:— Դո՛ր ես գիտեմ պղտորել ջուրն, որ դու կիմես, շունքի դուն վերեւ ես, ես ցած»:

«Լաւ,— ասաց գէլն,— էս բաց թողնեմք, ամա մտիտ չէ՞»,— ասաց,— թէ մին տարի կայ, որ դու պատահաւ ես եղիլ, որ շներն ինձ կծատեցին»:

«Ես մին տարի չկամ,— ասաց դառն,— հավատա՛, պարո՛ն, բռանց երեք ամիս ա, որ ես ծնեմ եմ»:

«Ինչ որ րլնի,— ասաց գէլն,— քո հայրն կամ քո մայրն ինձ շատ անգամ շատ սիթամ են արել, պիտի քեզանից քէնն հանեմ»: Գէլն էն ասելով՝ գառի վրա թոնում ա, կտրում ա, ու-ւտում ա:

Խ ր ա տ

Աստուած մեծատանց բռնութենիցն քեզ պահէ, որչանք անմեղ լինիս, եթէ գուգեն քեզ վա-տութիւն անեն, ամեն կերպ մահանա կրոնեն, ոչ իրանց անիրաւ կամքն կատարեն:

18. Փամի ու արեգակ

Մին օր արեգակ ու քամի միմեկի գնացին շքար, հասան մին մեծ դուղ և մին սարի ծայրին տեսին մին մարդ, որ խոտի վրէն թեք էր ընկած, ասացին՝ «Տկլորացնեմք էս մարդուն»: Երբ թող,— ասաց քամին արևոյն,— ես անեմ»:

«Չէ,— ասաց արեն,— թող ես անեմ, կտեսնես թէ բանն գլուխ կտանեմ»:

Քամին կողին լքնկաւ և սկսաւ դայիմ վառար ուժով փչել, ամա ոչինչ չարաց, զրա ևս մարդն, որ սարի վրէն էր, իր շորն դեն չը գցեց, ամա առաւել պատատվեց քամու դէմն, էն ժուկ արեգակն սկսաւ իր շառավիղովն երթել շքարցնել: Էն մարդն շորումն փթաթած՝ շորն հա-նեց:

Խ ր ա տ

Ուժով բան չէ լինիլ. ամէն ինչ քաղցրութենով կլինի: Հին առակ ա, թէ «Մեղրի կաթնովն էջ շատ նանձ կըռնի, քան թէ քաջախի կարասովն»:

19. Ազուլս ու այծն

Մին օր ազուլս ու այծ խիստ ծարաւ էլին: Երկուքն էլ մտան մին հորի մէջ խմելու: Համար. կուշտ խմելու յետն ուզեցին հորիցն դուս գալ. ամայ չը կարացին: Էն ժուկ ազուլս էջին սասաց. «Նսաթիոջամ կացի՛ր, ես ֆիքրեմ դոր պիտի էս տեղանց դուս ելնիմք, պիտի լա քո յետի ոտներին վրա կանգնիս և քո առաջի ոտներն հորի պատին դէմ դնես, քո կոտոշներն կեռացնես և պոխիտ ճածացնես սրտի դեմ, ես վեր ելնեմ և թռչելով հորիցն դուս կերթամ, և քեզ կհանեմ: Էծն ազուլսին հաւատաց և դոր ասացեր էր այնպէս արաց, ազուլսն հորիցն դուս ելաւ, սկսաւ հորի եզրն պար գալ, էծի վրա ուղիսանտ անելով և սկի հոգ չքաշեց, որ էծն հանէր: Էն ժուկ էծն բարկացաւ. ազուլսին վրա և իրան երես տուեց, թէ անիրաւ էր և իր իրզարիցն դուս էր: Ազուլսն իրան ճուղապ տուեց. «Օ՜ վ իմար և անխելք, եթէ քո գլխուտ էնչանք ըկուղ կեր, որ չանք քո միտքտ մալ ունի, առաջ քան մտնել էս հորի մէջ միտք կանէյիր, թէ ինչպէս դուս ելանեմ»:

Խ ր ա տ

Առաջ քան սկսել մին իրմին, լաւ միտք արա՛, թէ էն իրմինին վերջն դոր գլխի նթն դուս գլխիս:

20. Որսաւար ու վերի կով

Մէկ օր մէկ բանի որսարար գնացին որս, տեսին մին վերի կով, յետնէն վաղ տուին: Վերի կով իզու մեջ փախաւ զաղուեցաւ: Որսարարներն մտան իզու մէջ, գէս-դէս, աս կուժան այն կուժան ման ին դալիս, ամա մոնչ ինչ չգտան, ապա բաց թողին գնացին: Էն ժուկ վերի կովն սկսաւ ալպու տերեւներն ուտել: Որսարարք ձայնն իմացան, սկսան էլ նոր ման գալ և շունքի ալպու տերեւներն թիչացել էլին. թաք-թաք ին մնացել, որսարարքն վերի կով տեսին, մին թափանցրով վեր գցեցին: Վերի կովն մեռանելու ժուկն ասում էր. «Վա՛յ ինձ, էս տերեւ ինձ կու պահեր, ես բի աղուհաց և նամեք հորամ, լաւի փոխարէն վատութիւն տրտրի: Մեռնելու արժանի ելայ»:

Խ ր ա տ

Նոյն պատուհաս քեզ կհանդիպի, եթէ չարն հատուցանես փոխանակ բարոյն:

21. Վերի էջ ու տաճու էջ

Մին վերի էջ տան էջն տեսաւ, որ ախոռի մէջն հանգիստ նստած էր, զարի դարման կուշտ ուտէր: Նախանձեցաւ իրան վերա, և ասաց. «Էրնեկ էն իշուն, երոր ես սարին վրա կկենամ խեղճ, քաղցած, ողորմելի, նա զովդ է անում և կուշտ ա ուտում»:

Մին քան օր յետեւ վերի էջն տեսաւ տան էջն, որ մէջքի վրէն ձանտր-ծանտր բռն է տանում և էնտուր տէրն ծնծելով, թակելով, բզելով քշում էր, էն ժուկ վերի էջն ասաց. «Էստուց հետեւ քեզ վրեն էլ չեմ նախանձիլ, իմ զովդն քանց բռնն լաւ ա, քո ճաֆէն քանզ քո սաֆէն էլ շատ ա»:

Խ ր ա տ

Ամէն օր մէք մեծատունն տեսնեմք, որ լաւ կուտեն, կուշտ խմեն, սիրուն հագնին, զովդ ուրախութիւն անեն, ամա խապար չեմք, թէ իրանց նեղութիւն, ճաֆա, փորձութիւն որչանք այ:

22. Ալլուբ ու կալաւ

Մին մարդ հինգ ու վեց արջուր ունէր, մին կաքաւ առաւ, բերեց արջուրների մէջ ցղեց: Արջուրք ամէն օր կաքաւին հետ կոխ կանէյին, թակէյին, կտրցատէյին: Կաքաւն խիստ տրտմեցաւ և ինքն իրան մէջն ասում էր. «Հալպաթ թէ ինձ հետն էնպէս կոխ են անում, դրա ես զարիսլ»:

եմ, էնտոնց զաթից չեմ»։ Մէկ օր տեսաւ, թէ որձագններն մէկ մէկու հետ կոխի ին անում, ասաց. «Չունրի էնպէս ա, էստուց հետեւ էլ չեմ տրտմիլ։ Եթէ էնտոնք իրանց աղզի հետն կոխ կանեն, ինչ դարմանք էն թէ զարիպի հետն միաբան չեն»։

Խրատ

Ապալ դու ֆռանկ մի՛ դարմանալ, թէ հայոց մէջ գտնվին խոփաւորք, հակառակք կոռու-նիւթք, որո՛ւ բնի նեղացնեն, շունրի ամէն օր տեսնես թէ ինքեանք իրանց հետն պարիշ չեն։

23. Անասուճի ու աղիւծ

Մին աղիւծ ուրիշ հայվաններին հետն ընկերացաւ, թէ գնամք որս։ Ղօվլ արարին, թէ ինչ որ սրս կանեմք՝ բաժանեմք։ Գնացին, մին վայրի խող բռնեցին, ամէն անասունք եկին բոլոր-վեցան։ Մինն ասաց. «էս իմ բաժինն ա»։ Էն մէկէլ ասաց. «էն ա իմ բաժինն»։ Նույնպէս և վայր։ Բարկացաւ աղիւծն, վայրի խողն բռնեց, շորս ճոթ արաց, ասաց. «էս ճոթս իմն ա, ղէ-րա ևս քանզի ձեզ մեծ եմ, էն ճոթն էլ իմն ա, ղրա ևս քանզի ձեզ ուժով եմ, էն մէկէլ ճոթն էլ իմն ա, ղրա ևս շատ ճաֆա քաշեցի՝ քանզի ձեզ, էս մնացած բաժինն օվ որ գուզէ՛ առնու։ Ես իրան կկտրատեմ։ Անասունքն վախեցան, որսն թողին, դարտակ գնացին։

Խրատ

Եթե գուզես ուրիշի հետն ընկերանա, քո պէսին հետ ընկերացիր։ Թէ քանզ քեզ մեծի հետ ընկերութիւն անես, ինչ ղօվլ որ անէ, թէ քո հախն քեզ կուտամ, վերջ մին մահանա կբռնէ, որ բնի զրկէ։

24. Խաւն յլղի

Մին օր մին խաւար էլաւ, թէ մին սարն ուղում էր ծնէր։ Ամեն ժողովուրդ պօլուկ-բօլուկ բոլորվեցան գնացին սարի կուշտն՝ տեսնեն թէ վերջ ինչ գլնի։ Ողջ պաշարել էլին և սերկեր-տան, թէ էնչանք մեծ սարիցն ինչ կու ծնանի։ Սարի ցաւ բռնեց, ծնաւ, բերեց մին պստիկ մուկն, ժողովուրդ, որ տեսան, ծիծաղեցան, գնացին։

Խրատ

Շատ մարդ կայ, որ ինքն զինքն կգովէ, թէ ես շատ հունար ունեմ, էնպես արարի, էնպես գիտեմ, անեմ, ամմայ ձեռից բան չի վեր կալ։ Էնպես մարդն արժանի ա, որ իրան ողջխանտ անեն։

25. Գէլ ու կոռնկ

Մին գէլ մին ոչխարն բռնել էր, ուտում էր, մին ոսկոր ծուռ գնաց, կուլին բանտ էլաւ ևնդիւճ գէլն սկսաւ վայել, ամէն անասններին աղաղակել, թէ՛ «Աստուած կսիրեք էկէք մին ճար արէք, իմ կուլիցն ոսկրն հանեցէք»։

Վախեցան անասունք, ոնչօվ սիրտ շարեց, որ գէլին առաջ երթալ։ Էն ժուկն մին կոռնկ անց էկաց, գէլն ողորմորաց, ասաց. «Կոռնկ, իմ բո՛ւրս, քեզ մատաղ էրթամ, ինձ օգնութիւն տո՛ւր, դեղ արա՛, խեխտը՛վում եմ։ Թէ էն ոսկրն իմ կուլիցն հանես, ինչ որ յուզես, էն քեզ կը-տամ»։ Կոռնկն էկաւ, իր յէրկէն կտուցն կոխեց գէլի կուլն, ոսկրն հանեց։ Ասաց. «Գէլ ախպե՛ր, հրես ա պոծար, իմ հախն տուր»։ Գէլն բաբկացաւ և [ասաց]։ «Գնա՛լ, դու մոռնաթ չես գիտել, թէ գլուխտ իմ բերանումն էր ողջ դուս էկաւ, էլ ի՛նչ հախ ես ուզում»։ Կոռնկն էլ վախեցաւ, թռաւ, գնաց։

Խրատ

Շատ մարդ կայ, որ քանզ ալն գէլն էլ զալում և բի աղուհաց են։ Թէ դուն իրանց լաւութիւն կանես՝ իրանք քո լաւութիւն չեն յիմանալ։ Եբոր գուն իրանց պէթքական ես, ողորմորան, խո-նարհին քեզ առաջեն, եբոր իրանց շնորք արեցիր, քեզ էլ յ[էր]ես չեն տալ։

26. Դաշտի մուկն ու տան մուկն

Մին օր դաշտի մուկն էկաւ քաղաք, և տանու մկան պատիւ կանչեց։ Գնացին դաշտն։ Դաշտի մուկն ինչոր աղունք և աղուղա պատրաստել էր, խոտ հատ և արմատ, ամէն առաջ բերեց։ Մի-

ծաղեցաւ տանու մուկն ասաց. «Ապայ էս ա որ. ուտես, խեղճ ևս, մեր քաղաքումն կուտեմք զմե-
ղոր, շաքար, հաց և շատ ուրիշ անուշ կերակուր»։ Դաշտի մուկն ասաց. «Ապա պիտի լա որ ինձ
մին օր պատիւ կանչես, տեսնեմ ողորդ ես ասում»։ «Աչքիս վրա,— ասաց տանու մուկը,— է-
քուց վատայ ա»։

էքսն դաշտի մուկն էկաւ քաղաքն։ Պատին թամամ հազիր էր և սկսում ին ուտել մին սի-
րուն օթաղի մէջն. Երոր տանտէրն դուռն կբանա, ներսն կմտնու, մկններն կվախենեն, և սոֆ-
րից դողալով վեր կըկենան և կփախչեն իրանց բնի մէջն. տանտէրն օթաղիցն երոր դուս էլաւ.
տանու մուկն իր բնիցն դուս կուգա, և իր յրնկերն կկանչէ. որ վախից դողալով իրան ասաց.
«Ապայ դու էսենց կուտես, ես լաւ կուզեմ իմ խոտերն. իմ տակ... յիկներն անվախ, և թէ դաղ-
տաղա ուտել, քան թէ ուտել հանապազ ձեր պատուական կերակրեր վախի և դաղտաղի մէջ»։

Խրատ

Մեծատանց վրա նախանձում ենք, երոր մինակ իրանց մեծութիւն տեսնումք. ամայ, ամայ
օլ որ իրանց տրտմութիւն, իրանց ճաֆա կանաչէ էնտուր խեղճ են գալիս։ Քիչ ապրանք
տոանց տրտմութեան լաւ է, քան շատ ապրանք տրտմութենի մէջ։

27. Մին կնիկ. մին հաւ

Մէկ օր մին [կնիկ] մին [հաւ] ունէր, որ ամէն օր մին ձու էր ածում, էն կնիկն իրան
ֆիւրիի մէջն ասաց. «Զուրբի իմ հաւն օրն մին-մին ձու ա ածում, էկէր իրան շատ կուտ կտամ,
մէկի աբիւն երկու կածէ, ապայ շատ կուտ տվեց։ Հաւն էնչանք կիրացաւ, որ էլ ձու չածեց։

Խրատ

Ազահութենէ [է] փախի՛ր, էն փոքր, որ աստուած բեզ տուել ա, ինտուց ռազի կացի՛ր։ Ոչ
որ շատ գուղէ՛ ամէն կկորցնէ։

28. Մին կնիկ ագահ

Մին կնիկ մին հաւ ունէր, որ ամէն օր կածէր մին ռսկէ ձու էն կնիկն ասաց. «Աւաղտ թէ
իմ հաւի փոքրի մէջն պիտի մին ռսկէ մատան լինի, ապայ հաւն մօթից, փոքրն ճղեց, ամայ ին
կնիկն ըսկի դատ փոքրի միշումն չը գտաւ, ապայ իր ազահութենիցն ամէն կօրուց և ըսկի գտու
չահեց։

Խրատ

էրնեկ ընտուր, որ քիչ դատին ռազի ա։ Ազահ մարդ շատ հետ կկորցնէ ինչ որ ունի, երոր
ուզում ա յ ինչ որ շունի։

29. Մին շուն

Մին շուն, անունն Վալուշ, մին օր Սպահանա գետումն լող տալով անց էր կենում։ Բերա-
նումն ունէր մին մեծ կտոր միս։ Էն մսի շաքը ջրի մէջն երևում էր։ Շունն էն շաքն տեսնելով՝
չնպես իմացաւ, թէ ալալթ մսի կտոր էր, բերանն բացաւ, որ բռնէ, ամայ գատ շղտոււ նւ էն
միսն, որ բերանումն էր, ընկաւ, գետն տարաւ։

Խրատ

Ազահ մարդ էն շան պէս ա. ինչոր ունի հերկիլ ռազի չէ։ Հանապազ ուզում ա յ ինչ ունի-
նայ, ամայ շատ հետ ողջուկ էլ կկորցնէ։

30. Մին հալետու մարդ ու մահ

Սին հալետու մարդ գնացէր էր քանկալիցն փէտ բեռ բերէր իր տունն։ Շալակի վրա ծանար
էր, ծանտութենէն դադրաւ ընկաւ, մահ կանչեց իրան համար։ Մահն էն սահաթն իրան երևաց
և ասաց, թէ՛ «Ի՞նչ բան ունիս ինձի հետ, որ ինձի կանչեցիր»։ Ասաց հալետուն, թէ՛ «Ես կան-
չեցի, որ ինձ օգնութիւն անես, որ էս բեռ փէտն վեր կալենա»։

Խրատ

Որչանք որ շարշարանք և ջաֆայ Աղամայ որդույն շատ բնի, մահին ռազի չի բնի։

31. Այծեամ ու կովեր

Զէյրան որսարարի վախիցն փախաւ, մին գոմ մտաւ, էնտեղ կովեր կէր, աղաչեց իրանց թողնին մին սահաթ էստեղ պահուի: Կովերն ասացին. «էստեղ քու պահուելու տեղ չէ, ընտուր համար որ էս տանն նօթար կա, տէր կա, տղա կայ, ամէն սահաթ գուգան կերթան, քեզ կբռնեն»: Այծեամն ասաց. «էթէ դուր, նշանց շեք տալ, յահ շքկայ»:

Էն խօսքի վրա նօթարն եկաւ, այծեամն փախաւ խոտի տակն: Նօթարն չիմացաւ, դուս յիշաւ, դուռն ամբեց, դնաց: Էն ժուկն ջէյրանին սիրտն պրկաւ, էլ շէր վախում: Մեծ եզն ասաց. այծէմին. «Սնմիտք նօթարին խափելն հեշտ ա, ամա տանտէրն, որ աչքն բաց ա, ամէն տեղն կրնտտէ, ամէն բանն կիմտնայ, չէ յրէնի, որ խափես իրան, կու բռնէ գրեգ»: Մին սահաթից յետ տանտէրն էկաւ մտաւ գոմն. էս դիհն էն դիհն ման գու դէր, էն խոտերին ձեռ տվեց, ջէյրանն գտաւ, բռնեց ու մորթեց:

Խրատ

Այծեամն, որ կփախչի. նման է մեղաւոր մարդին, որ իր մեխքիցն չի յուզեր փախնի, ամա Աստուած Աստուծոյ Կանփից ամէն օր ինչ երկար լինի: Էն նօթարն, որ ջէյրանն չի տեսնիլ, խոտտովանահար ա, երոր խոտտովանիս մէկ մեղքն մեծ, որ քեզ կտանի դժոխքն, ամոթով շիտ ասել խոտտովանահօրն, նօթարի նման կխաբես, ամա տանտէրն, որ Աստուած ա, երոր դու գայ ամէն խապար ալ, ընտուր համար Աստուծոյ իսկի բան չի պահուի: Աստուած շես կարեր խարեր, դու գայ, կտեսնի, կու բռնէ կսպաննէ, դժոխք կու յգէ:

ԱՌԱՐԱՆԵՐ ԲԱՂՎԱՄ «ՀՈՒՇԱՄԱՏԱՅԱՆՑ»

1. Ճգնաւոր մուկը

Մուկ մի շրջէր ամպարի միոջ, յորում կային բազում կաղապարս պանրից, որք էին շաղկապած ի մէջ արնընդից: Զգաց մուկն այն ի հոգի իւր, թէ գուրն ի մէջ նոցա գիր ինչ վասն ապրելու չորս: Այնքան աստ և անդ շրջեցաւ մինչոր գտաւ կաղապար մի, որ վրայի շապիկն թոյլ էր ծալած: Շուտ աշխատեցաւ մինչոր կարաց գլուխն ի ներս մուծանել: Տեսաւ անդ իւր ցանկալի ապրուստն, որ որքան որ կենդանի էր՝ բաւական լինէր ինքեան: Զկնի ուրախութեան իւր կենդանի գտաւ, յաղ և ասաց.

— Քան վաշտ առաւել ի՞նչ կամի յանձն իմ,— ասէ,— բնակեցայց աստ և միշտ ուրախ եղեցի: Դարձեալ խորհեցաւ և ասէ.— Աստ մնալս գուցէ վնաս առ բերէ, զի որոնեն զիս զազգն իմ և տեսնուն զայս իարիքս և լինին բնկեր բարեացս, զոր աշխատանք գտայ ես զայս: Գիտեմ զինչ արարից,— ասէ,— գնամ նախ հրաժարիմ ի աղգականացս և ապա գամ անհոգս բռնակիմ աստ:

Այսպէս անց առ աղգականսն իւր, կոշեաց զնոսա զամենեսեանսն առ ինքն և ասէ.

— Ես կամիմ հրաժարիլ ի աշխարհէն և լինիլ կրօնաւոր և մտանել ի վասն ուրուր:

Լալով և սգալով բերին զնա առ կաղապարս պանրաց, տեսին նոքա աշխարհ արճընապատ պանրիս, համարեցան թէ է կարկառոս քարանց: Զկնի լալուց և սգալուց մտաւ ձգնաւորն ի ծալ անդր և նոքա ողջունեալ դարձան ի տեղիս իւրեանց:

Անցաւ աւուրս բազումս, յարեաւ որսորդ կատու մի, որ սպառեալ կամէր զամենայն սնորունս մկանց, վասն որոյ ժողովեցան ամենայն մկունք խորհիլ վասն կատուին հնար ինչ: Որ ոչ գտան ճար ինչ, ասեն.

— Գնացից առ հաւն (նախահայրն) մեր, որ եմուտ ի քարս, հարցցուք ի նմանէ, քանզի հնազոյն է ի մեզանէ:

Գնացին և կանգնեցան ի վերայ ծաղիկն և ձայնս արձակեցին: Երկեաւ մուկն, թէ մի գուցէ մտանէ որ ի ներս և տեսանէ վայելչութիւն վանուցն այն, առժամայն դուրսն դուրս բերեց ի ծակէն, նւազ ձայնի հարցանէր ի նոցանէ, իբր թէ նւազեալ է ի կենաց՝ ի քաղց և ի ծարաւ մնալով:

— Վասն որո՞յ իրաց,— ասէ,— եկիք:

Նոքա բողբոս բարձին և ասեն.

— Մեռանիմք ի սովու, քանզի յարեցաւ անօրէն կատու մի, որ ոչ կարեմք ելանէ և գտանք նեւ կերակուր, որով ապրիցուր:

Պատասխանեց.

— Վասն այն հրաժարեցայ ես աշխարհէ, որ ոչ խառնակիմ այդպիսի իրաց: Գնացէ՛ք, գո:ք
 քիտեք ձեր օգուտն:

Պատասխանեն.

— Որ ոչ կամիս օգնել մեզ, գոնէ տուր մեզ տեղի, զի մեք ձգնիցուք ընդ քեզ:

Պատասխանեն.

— Աստ ոչ գոյ բաւական տեղի մեզ և ձեզ: Արդ եթէ կամիք լինիլ ձգնաւոր, ա՛նա քարինք
 քաղում կան առաջի ձեր, մտէք ի նոսա:

2. Անձնասէր կրօնաւորը

Կրօնաւորք երկու գնացին ի ձանապարհ, պատահեալ ի տեղի մի տեսանեն գունդ իր մի՝
 կախեալ ի թելէ միոջ: Կամեցաւ կտրել կրօնաւորն զթելն այն: Այր ոմն, որ տնդ կայր, ասուց
 ցկրօնաւորն.

— Այր դո՛ւ, զի՛նչ կամիս առնել:

Ասաց կրօնաւորն.

— Կամիմ զի հատից զթելն զայս:

Ասաց այրն.

— Ի թելդ կայ ի կախեալ զամենայն աշխարհ, եթէ հասցես զդա՝ կորնչի ամենայն աշ-
 խարհ:

Պատասխանեց կրօնաւորն.

— Ինձ ոչ է փոյթ, եթէ կորնչի աշխարհ, այլ զայս թելս ինձ փոյթ է ունիլ, որով կարկա-
 տել կամիմ զհանդերձն իմ:

3. Սոված արջը

Արջն սօվի և ոչինչ գտանէ ուտելի, խորհի ուտել զզաւակն իւր, բայց ենթադատէ ի մտի և
 ասէ.

— Մեղադրեն զիս, թէ Լկեր զզաւակն իւր:

Կալնու զթոթոթն իւր և թաւալեցուցանէ զնայ ի մէջ տղմից այնքան, որ այլապէսպիսի Զինի
 այնքան անարդարեան և շարշարանացն հայի դէպի նա և ասէ.

— Ի՞նչ է սա:

Դարձեալ դարնայ և պատասխանէ ինքն իւրեան և ասէ.

— Քո զաւակն է:

Դարձեալ պատասխանէ.

— Քաւ լիցի. սա ամենայն ի:օք ոչ նմանի ինձ:

Այնժամ սկսէ զնա պատառել և ուտել:

4. Գորտն ու կարիճը

Կարիճ ոմն եղբայրացաւ ընդ գորտի միոջ: Աւուր միում Լկաւ կարիճն առ արին լճին՝ տե-
 ւանել զեղբայրն: Զկնի բաղում դրուցից, ասաց կարիճն ցգորտն, թէ՛

— Կամիմ, որ տանիս զիս ի նեղքս ի լիճն զբօսնուլ:

Առաւ շալակն և խաղացոյց ի ներքս: Զկնի զբօսանացն ասաց կարիճն գորտուն, թէ՛

— Եղբա՛յր, կամիմ խայթել զքեզ:

Պատասխանեց գորտն և ասաց.

— Ինձ հետ եղբայրացել ես և խոստացար ընդ իս բարեկամութիւն պահել, քեզ հակառակ
 ինչ ոչ գործեցի. յաւել՝ առի քեզ ի շալակս և բերի աստ զբօսնուլ, փոխանակ բարութեանս կա-
 ռիս տրիտուր տալ:

Պատասխանեց կարիճն և ասաց.

— Իբրաւ որ եղբայրացայ ընդ քեզ և դուն ասիւրատ ինչ ոչ գործեցիր ընդ իս, բայց իմ բը-
 նութիւնս այնպէս է՝ մինչոր ոչ խայթեմ՝ ոչ լինիմ:

Ի ասել բանին պօստփեց գորտն ի տակէն կարճին և լողաց, բայց կարիճն եղև խեղդամա՛ն:

Բ Ա Ռ Ս Ր Ա Ն*

- Արթի (27) — անստույգ նշ. բառ:
- + Ազուկա (26) (պարսկ. azuka) — ուտելիք, պաշար:
- + Աթթեր (11) (արաբ., պարսկ. 'aṭṭar) — դեղավաճառ:
- + Ալմազրաշ (1) (պարսկ. almasrash) — ակնհատ, աղամանդագործ:
- Ալպեր (28), Ալպետ (29) (արաբ.-պարսկ. albata) — խհարկե, անտարակույս: Տե՛ս և հալ-պալ:
- Հալբաթ ձեռով օգտագործվում է որոշ բարբառներում (Մալխասյանց, ԺՀԼԲԲ):
- Ախր (11) (արաբ.-պարսկ. akh r) — վերջ, ավարտ:
- Ախր-ախր — վերջ ի վերջո:
- Մալխասյանցը և ԺՀԼԲԲ ունեն ախար, ախր, ախր որպես եղանակավորող բառ «Չէ՞ որ, ապաքեն, բայց դե՞» իմաստներով:
- Ամա, Ամմա (1, 2...) (արաբ.-պարսկ. amma) — բայց, սակայն:
- Բանտ (25) (պարսկ. band) — արգելք, պատնեշ:
- Բանտ կլավ (25) — դեմ կանգնեց:
- Մալխասյանցը և ԺՀԼԲԲ ունեն բանդ և բանտ «թուժք, կասկ, հանգույց» իմաստներով:
- + Բրուն (15) (թուրք. buntun) — ամբողջական:
- + Բի (20, 25) (պարսկ. bi) — առանց, ան ժխտական նախածանց:
- + Բի աղումաց — անաղուհաց:
- Բնանց (17) — հագիվ հաղ:
- + Բոլուկ, պոլուկ (24) (թուրք. buluk) — խումբ:
- Բիլբուլ (3) — հատնել:
- Բործ (16) — սարգոստայն:
- Բործարար (16) — սարգ:
- + Դաղտաղա (26) (արաբ.-պարսկ. daghdagha) — երկյուղ, սարսափ, վախ:
- Դեզուղ (9) — ուղեղ:
- + Զաթ (22) (արաբ.-պարսկ. dhāt) — 1. ցեղ, տեսակ: 2. բան:
- Զուտ (2, 5) — տե՛ս զար 2:
- Զարար (4, 19) (արաբ.-պարսկ. darar) — վնաս:
- + Զլրա (6, 23), զրա (18, 22) (պարսկ. zīra) — որովհետև, քանի որ:
- Հուլմ (3) (արաբ.-պարսկ. zulm) — բռնաթյուն:
- Մալխասյանցը և ԺՀԼԲԲ ունեն զուլում ձևով:
- + Զովդ (6, 21) (արաբ.-պարսկ. dhok) — համույթ:
- + Էկեր (27) (պարսկ. agar) — եթե:
- Էդեֆի (7) — եղեղ:
- Էրես (2) — հրես, ահա:
- Էլկուղ (19) — ուղեղ:
- + Թափանցրն (20) (պարսկ. tapanca) — ատրճանակ:
- + Թիթալ (14) (պարսկ. līlāl) — շողորորթություն:
- Թոնտ (13) — խակ:

* Յուրաքանչյուր բառի համառ տրվում են տվյալ կոնտեքստի մեջ նրա ունեցած իմաստ-ները: Փակագծերում բերված թվերը մատնանշում են առակի համարը: Բոլոր այն բառերը, որոնք մեր բառարաններում չեն գրանցված, ցույց են տրվում + պայմանանշանով: Եթե բառը ծանոթ է մեր բառարաններին, սակայն նորովի է մեկնաբանվում կամ բացատրվում, ապա այն ցույց է տրվում օ պայմանանշանով: Բառարանում բերված են բարբառային որոշ ձևեր, որոնք տրվում են □ պայմանանշանով: Այս բառարանում վկայակոչված են՝ Հր. Աճառյան. Հայերեն տրամատական բառարան. հհ. Ա—Է, Երևան, 1926—1935 = Աճառյան: Ստ. Մալխասյանց. Հայերեն բացատրական բառարան. հհ. Ա—Դ, Երևան, 1944—1945 = Մալխասյանց: Ժա-մանակակից հայոց լեզվի բացատրական բառարան. հհ. Ա—Դ, 1969—1980 = ԺՀԼԲԲ:

□Իել (16) — ավել, ավելի:

+ Իրդար (10) (արաբ.-պարսկ. ikrār. հայերենում դր ետևառաջնությունը) — համաձայնություն:

○Լանկա (15) (թուրք. lan̄kar) — տափակ ափս (կավից կամ մետաղից):

Մալխասյանցը ունի լանկարի ձևով:

□Խիզան (4) — երէխա:

+ Խարիթամ (19) (արաբ.-պարսկ. khatirdjam') — վստահ, համոզված:

□Կուլ (25) — կոկորդ:

○Կուման (20) (պարսկ. gumān) — կարծիք:

Աճառյանը (Բ, 302) ունի գուման ձևով:

+ Կոռուանիուր (22) — Լոհիմ նշութող:

□Հալոդիկ (5) — ստամոքս:

Հալս (2, 14, 25) (արաբ.-պարսկ. hakh) — իրավունք, հասանելիք:

+ Հալաս (15, 16) (արաբ.-պարսկ. 'abath) — զուր:

Հաս-հալաս — իզուր:

+ Հերկիզ (29) (պարսկ. hargiz) — երբեք:

○Հունար (24) (պարսկ. hunār) — շնորհ:

Մալխասյանցը դնում է որպես պահպանված փոխառություն: Ուղղելի՛ պահպանվ. փոխառություն է նկար, իսկ հունար նոր փոխառություն է պարսկերենից (տե՛ս Աճառյան, Դ, 335):

Ղալիա. Ղալիյեա (15) (արաբ. kaliya) — մտով պատրաստված կերակուր:

+ Ղալիազ (15) (պարսկ. ghayr-az) — բացի:

○Ղուլ (23) (արաբ.-պարսկ. kūl) — խոստում, պայման:

Վկայված է XI դարից ղալ ձևով, Աղամզիրը 21, 255 (Աճառյան, Արմատ. բառ., Դ, 538):

○Ճառահ (11) (արաբ.-պարսկ. djarrah) — վիրաբույժ:

Մալխասյանցը ունի չառահ:

○Մառան (28) (արաբ.-պարսկ. mā'dan) — հանք:

Մալխասյանցը ունի մաղան ձևով:

□Մանչ ինչ (20) — ոչինչ:

□Մոնչ (մոնչ) ուլ (4) — ոչ ոք:

Մուննար (25) (արաբ.-պարսկ. minnat) — երախտիք, շնորհ:

□Յրել (2) — ընել, անել:

+ Նամէհհարամ (20) (պարսկ. namakharām) — անաղուհաց, ապերախտ:

+ Շարմանտալ (15) (պարսկ. sharnianda) — ամոթխած, ամաչկոտ:

+ Շարմանտալ մնալ — ամոթով մնալ:

○Շաֆախար (10) (արաբ.-պարսկ. shafakāt) — շնորհ, գութ:

Մալխասյանցը ունի շաֆաղար ձևով:

+ Շլրադ (17) (թուրք.-պարսկ. shiltak) — ամբաստանություն:

+ Շֆուր (18) (պարսկ. shikar) — որս:

+ Չանէ (8) (պարսկ. čana) — ծնոտ:

+ Չիման (12) (պարսկ. čaman) — մարգագետին:

□Չուտ (6)՝ հավանաբար չուտ — արագ-արագ:

Պլուր (15) (արաբ.-պարսկ. bilūr) — բլուրեղ:

Պուլուկ (24) — տե՛ս բուլուկ:

+ Զանկալ (30) (պարսկ. djangai) — անտառ:

+ Ռրշխանտ, ոշխանտ (7, 11, 14, 19, 24) (պարսկ. rishkhand) — ծաղր, ծանակ:

+ Սաֆէ (21) (արաբ.-պարսկ. safā') — հաճույք:

+ Սերկերտան (24) (պարսկ. sargardān) — տարակուսած:

+ Սիրամ (17) (արաբ.-պարսկ. sitam) — անիրավություն, բռնություն:

Սոֆրա (26) (արաբ.-պարսկ. sufra) — սփռոց:

- Մալխասյանցը և ժՀԼԲԲ ունեն սուփրա ձևով:
 Օ՛վատայ (26) (արար.-պարսկ. wa'da) — ժամագրություն:
 Մալխասյանցը ունի վաղա ձևով:
 Ը՛վերի (20, 21) — վայրի:
 Վեկինամար (11) (արար.-պարսկ. wallini'mai) — բարերար:
 + Յիմա (15) — անստույգ նշ. բառ:
 + Քանտարար (9) — արձանագործ:
 Օ՛քուշի (16) (պարսկ. kusht) — դատեմարտություն:
 Աճառյանը (2, 1526) բուշտիկ ձևով բառս վերցրել է Գարամաճյանի բառարանից՝ նը-
 շուրվ, որ առանց վկայության է:
 + Ֆայտա (12) (պարս.-պարսկ. fayda) — օգուտ, շահ:
 Օ՛հիբր (27) (արար.-պարսկ. hkr) — միտք, մտածմունք:
 Մալխասյանցը ունի փիբր, իսկ ժՀԼԲԲ ֆիբր ձևերով:
 + Ֆիբրել (19) — մտածել, խորհել:
 Կաղմված է արար.-պարսկ. ֆիբր (տե՛ս) «միտք, մտածմունք» և հլ. էլ լծորդություն:
 + Ֆոռքնա, ֆոռքնա (7) (իտալ.-թուրք. fūrjūna) — փոթորիկ:

ЕГИЯ МУШЕГЯН КАК БАСНОПИСЕЦ

Б. Л. ЧУКАСЯН

Резюме

Среди материалов различного характера (коммерческие тетради, письма, официальные государственные документы, стихотворные рукописные сборники и т. д.), хранящихся в деле купца XVIII века Егип Мушегяна (1689—1750?) в фонде «Сношения России с Арменией» Архива внешней политики России, сохранилась его тетрадь для изучения французского языка, где переписана 31 басня на армянском и французском языках. Всестороннее исследование этих басен подтверждает, что они являются каким-то вариантом французского перевода басен Эзопа, переведенных в 1720—1722 гг. на разговорный армянский язык в иранском городе Новая Джульфа Егней Мушегяном. В дальнейшем, спустя почти 25 лет, Егия в книге своих воспоминаний записал еще 4 басни, которые сами по себе имеют художественную ценность. Деятельность Егип в области баснописания является новой страницей в истории армянской литературы XVIII века и представляет интерес с точки зрения изучения армяно-европейских литературных связей.